ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐ՝
Մ.Գ.Թ., ԴՈՑԵՆՏ Հ.ԲԻՇԱՐՅԱՆ

<<13>> նոյեմբեր 2023թ.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔԸ

**Մարտին Անդրանիկի Մանուկյանի
«Պառլամենտի եվ պառլամենտարիզմի կատարելագործման հիմնախնդիրները հայաստանի հանրապետությունում
սահմանադրական բարեփոխումների համատեքստում» թեմայով
ԺԲ.00.02- հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ**

Ատենախոսությունը քննարկվել է Հայաստանի եվրոպական համալսարանի Իրավագիտության ամբիոնի 2023 թվականի նոյեմբերի 13-ին կայացած նիստում (արձանագրություն թիվ 4):

Մասնակցում էին՝

Իրավագիտության ամբիոնի վարիչ ի.գ.թ. Ի. Իսկանդարյանը, ամբիոնի դասախոսներ՝ ի.գ.թ., դոցենտ Վ. Թորոսյանը, ի.գ.թ. Դ.Սարգսյանը, ի.գ.թ. Ա.Թադևոսյանը, ի.գ.թ. Կ. Բաբայանը, ի.գ.թ. Ս. Իսկանդարյանը, ի.գ.թ. Էդ. Ավետիսյանը, ի.գ.թ. Կ. Բատիկյանը, Ա. Գյուլումյանը, Լ.Զիրոյանը, Ա.Բիշարյանը, Մ. Համբարձումյանը, Գ. Ադոնցը, Զ. Մկրտչյանը:

Ատենախոսության թեմայի արդիականությունը, կառուցվածքը և հիմնական բովանդակությունը

Սույն թեկնածուական ատենախոսությունը նվիրված է Հայաստանի Հանրապետությունում պառլամենտի և պառլամենտարիզմի կատարելագործման հիմնախնդիրներին, սահմանադրական բարեփոխումների համատեքստում դրանց լուծման գիտական նոր ուղիներ մշակելու ու համապարփակ լուծումներ առաջարկելու հարցերին:

Պառլամենտին և պառլամենտարիզմին առնչվող հիմնախնդիրները շարունակում են արդիական մնալ, հետևաբար, կարող են դառնալ նոր գիտական հետազոտությունների առարկա: Թեմայի հետազոտման արդիականությունը պայմանավորված է նաև ներկայացուցչական կառավարման պառլամենտական ձևի տարածվածությամբ և պետական իշխանության բարձրագույն մարմինների գործունեության կազմակերպման առավել արդյունավետ կառուցակարգերի որոնման անհրաժեշտությամբ:

Աշխատանքում միջազգային փորձի համալիր ուսումնասիրության հիման վրա՝ հեղինակը հանգամանորեն վերլուծել է քննարկվող հիմնախնդիրներին առնչվող հարցադրումները՝ առաջարկել է որոշ լուծումներ, այդ թվում՝ օրենսդրության փոփոխության առաջարկներ և իրավակիրառ պրակտիկայում առաջացած հարցերի լուծման եղանակներ:

Աշխատանքում բարձրացված հարցերի համալիր վերլուծությունը կարող է օգտակար լինել նաև Հայաստանի Հանրապետությունում նախապատրաստվող սահմանադրական փոփոխությունների համատեքստում: Ուստի աներկբա է, որ ընտրված թեմայի արդիականությունը և հրատապությունը, կասկած չեն հարուցում:

Ատենախոսության գիտական նորույթը

Ատենախոսության հեղինակը նշում է, որ իշխանությունների բաժանման և հավասարակշռման խորհրդարանական մոդելի պարագայում պետական իշխանության մյուս մարմինների նկատմամբ Ազգային Ժողովը ձեռք է բերում այսպես կոչված «գործառութային գերակայություն», սակայն, այդ հատկանիշն ինքնին չպետք է

դիտարկել որպես պետական իշխանության օրենսդիր, գործադիր ու դատական ճյուղերի միջև սահմանադրական հավասարակշռության խախտում:

Հետազոտության հեղինակը հիմնավորել է նաև, որ պետական իշխանության մարմինների միջև գործող զսպող, հավասարակշռող և փոխլրացնող համակարգերը կրում են ոչ միայն միջճյուղային, այլ նաև ներճյուղային բնույթ: Այն է՝ միմյանց զսպում, հավասարակշռում և փոխլրացնում են ոչ միայն պետական իշխանության ճյուղերը, այլև պետական իշխանության ճյուղերի ներսում գտնվող մարմինները, այսինքն՝ պետական իշխանության ճյուղերի ներսում ևս առկա են ներճյուղային զսպող, հավասարակշռող և փոխլրացնող կառուցակարգեր:

Գիտական նորույթը պայմանավորված է նաև պաշտպանության ներկայացված դրույթներով, որոնց մեծամասնությունն, մեր կարծիքով, արժանի է առանձին ուշադրության: Այսպես՝ ատենախոսության հեղինակը գտնում է, որ՝

1. Պառլամենտն առանց պառլամենտարիզմի վերածվում է պատրանքի: Հետևաբար, պառլամենտը և պառլամենտարիզմը ժողովրդավարական հասարակարգերում փոխկապակցված, մեկը մյուսին լրացնող, մեկը մյուսի վրա ազդող կառուցվածքային մարմին և այդ մարմնի գործընթաց են: Պառլամենտարիզմի դրսևորումները նախևառաջ նրա քաղաքական բնույթի մեջ են: Պառլամենտարիզմը՝ որպես իրավաքաղաքական երևույթ, որպես համակարգ կարող է գոյություն ունենալ միմիայն ժողովրդավարական պետություններում՝ իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի հիման վրա:

2. Պառլամենտարիզմը նեղ իմաստով գոյություն ունի միայն այնպիսի պայմաններում, երբ պառլամենտում ոչ մի քաղաքական կուսակցություն չունի մանդատների բացարձակ մեծամասնություն և, ըստ այդմ, ինքն իրենով չի կարող ձևավորել միակուսակցական կառավարություն: Միայն այդ դեպքում պառլամենտի առջև կառավարությունը կկրի իրական պատասխանատվություն:

3. Պառլամենտարիզմը բնութագրում է հասարակության կազմակերպվածությունը և ժողովրդավարության մակարդակը: Պառլամենտական հանրապետությունում չկա «նախագահի գերակայություն, բայց սովորաբար կա նախագահի ինստիտուտ, իսկ նախագահական հանրապետություններում կարող է լինել պառլամենտարիզմ, քանի որ կա պառլամենտ: Պառլամենտարիզմը ծնվում է քաղաքականության շնորհիվ, ի սկզբա-

նե քաղաքական է, սակայն ձևավորվում և գործում է նորմատիվ իրավական ակտերի միջոցով, ինչի հետևանքով դառնում է նաև իրավական:

Ատենախոսության հեղինակը ելնում է այն դիրքորոշումից, որ յուրաքանչյուր պետություն ունի կառավարություն, սակայն միայն ժողովրդավարական պետություններն ունեն ընդդիմություն, իսկ պառլամենտում «ընդդիմություն - մեծամասնություն» հարաբերությունը բնորոշվում է նրանով, որ մեծամասնությունը «կառավարում է», իսկ ընդդիմությունը՝ «վերահսկում», նկատի ունենալով, որ հետագայում հնարավոր է դերերի փոփոխություն»:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից և երեք գլուխներից, որոնք ներառում են տասը ենթագլուխներ, եզրակացությունից, օգտագործված գրականության, իրավական ակտերի և միջազգային պրակտիկայի նյութերի ցանկից, շարադրված է համակարգչային շարվածքի 186 էջի վրա:

Հետազոտության հեղինակը պառլամենտի և պառլամենտարիզմի համաշխարհային պրակտիկայի վերլուծության հիման վրա՝ կատարել համակարգված և համալիր հետազոտություն՝ հիմնավորելով, որ իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը չի խախտում պետության ինքնիշխանության հատկանիշը:

Ատենախոսության նշանակությունը տեսական և գործնական կիրառությունների համար

Հետազոտության տեսական նշանակությունն այն է, որ դրա արդյունքների հիման վրա ձևավորված դրույթները և եզրահանգումները որոշակիորեն կզարգացնեն սահմանադրական իրավունքի տեսությունը, իսկ ստացված արդյունքները կարող են օգտագործվել հետագա հետազոտողների կողմից՝ իրենց գիտական ուսումնասիրությունների գործընթացում:

Հետազոտության գործնական նշանակությունն այն է, որ աշխատանքում ձևավորված հիմնական դրույթները կարող են օգտագործվել իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայում, ինչպես նաև բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ սահմանադրական իրավունքի դասընթացի դասավանդման ընթացքում:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

1. Պաշտպանության ներկայացվող առաջին դրույթում Հեղինակը, առաջ քաշելով ժողովրդաիշխանության գաղափարը, իրավացիորեն, նշում է, որ իշխանությունը պատկանում է ոչ թե պառլամենտին, այլ ժողովրդին: Պաշտպանության առաջադրվող դրույթում հաջորդիվ ներկայացվում է ժողովրդի ինքնիշխանության գաղափարը, սակայն բուն աշխատանքում չի հիմնավորվում, կամ առնվազն թերի է ներկայացված «ժողովրդի ինքնիշխանության» ինստիտուտի էությունը և ինչպես է այն հարաբերակցվում ժողովրդաիշխանության ինստիտուտի հետ, կամ արդյոք խոսքը գնում է նույն կառուցակարգերի մասին: Բացի դրանից պաշտպանության ներկայացվող 1-ին դրույթն ամբողջությամբ կրկնում է աշխատանքում ներկայացված Մ. Բիխարինի կարծիքը (էջ 26):

2. Պաշտպանության ներկայացված 7-րդ դրույթում հեղինակը խորհրդարանական մոդելի սահուն անցման և գործառույթ-ինստիտուտ-լիազորություն սահմանադրական շղթայի անշեղ ապահովման համար ներկայացնում է մի շարք հարցադրումներ: Կարծում ենք պաշպանության ներկայացվող դրույթներում պետք է արտացոլվեն ոչ թե հարցադրումներ և առաջ քաշվեն հարցեր, այլ տրվեն դրանց համարժեք պատասխաններ և լուծումներ: Հեղինակը աշխատության տարբեր էջերում այս կամ այն չափով անդրադառնում է այդ հարցադրումներին, ուստի կարծում ենք պետք էր դրանց գիտական նորույթ պարունակող արդյունքները արտացոլել այդ բաժնում:

3. Պաշտպանության ներկայացվող 9-րդ դրույթում հեղինակը նշում է, որ «Օրենքների մշակման և օրենսդրական նախաձեռնությունների պրակտիկան վկայում է, որ օրենսդրական նախաձեռնությունների գերակշիռ մասը պատկանում է կառավարությանը, ինչն ուղղակիորեն հանգեցրել է օրենսդրական գործունեության ոլորտում կառավարության դերակատարության շեշտակի ընդլայնմանը և Ազգային Ժողովի դերակատարության խիստ նվազմանը»: Մեր կարծիքով, հետազոտության համակողմանիությունը ապահովելու համար ցանկալի կլիներ, որ այս պնդումը հիմնավորված լիներ կոնկրետ վիճակագրական տեղեկատվությամբ, մինչդեռ,

ատենախոսության մեջ հեղինակի կողմից նման վիճակագրական տվյալներ չեն բերվում, առավել ևս, երբ նշվել է որ մեթոդաբանության հիմքում ընկած է նաև վիճակագրկան մեթոդը: Այո, հեղինակը իրավացիորեն մատնանշում է կառավարության օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու գերազանցության մասին և դրան զուգահեռ Ազգային ժողովի «պասիվության» մասին, սակայն այս մտահոգությունը չի փարատվում հստակ ներկայացված առաջարկներով և տվյալներով:

4. Ատենախոսության տեքստում բացակայում է պաշտպանության ներկայացվող 13-րդ դրույթի առաջին կետի ա) ենթադրույթում նշված իրավական բնույթի վեճերը վարչական արդարադատության միջոցով լուծելու վերաբերյալ դիտարկումները: Այլ կերպ՝ պաշտպանության ներկայացվող դրույթը ատենախոսության շրջանակներում նյութական հիմք չունի: Ներկայացված չէ ինստիտուտի անհրաժեշտության, գործառույթի վերաբերյալ ոչ դոկտրինալ, ըստ էության, ոչ էլ հեղինակի վերլուծական դիրքորոշումները:

Եզրակացություն

Ատենախոսության թեման և բովանդակությունը համապատասխանում են ընտրված մասնագիտությանը: Ատենախոսությունը և սեղմագիրը պատրաստված են ներկայացվող պահանջներին համապատասխան:

Սույն կարծիքում նշված դիտողությունները մասնագիտական խորհրդում հաջողությամբ պաշտպանելու դեպքում ըստ էության կարող են հաղթարահվել և չեն ազդի Մարտին Անդրանիկի Մանուկյանի գիտական աշխատանքի ընդհանուր դրական արդյունքի վրա:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Մարտին Անդրանիկի Մանուկյանի՝ «Պառլամենտի եվ պառլամենտարիզմի կատարելագործման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական բարեփոխումների համատեքստում» վերտառությամբ ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգով նմանատիպ աշխատանքներին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակը կարող է արժանանալ ԺԲ.00.02.- «Հանրային

իրավունք-սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՀԵՀ Իրավագիտության ամբիոնի վարիչ՝ իր.գ.թ., Ի. Իսկանդարյան

Հաստատում եմ Ի. Իսկանդարյանի ստորագրությունը

ՀԵՀ Գիտական խորհրդի քարտուղար՝ ի.գ.թ., դոցենտ, Վ.Թորոսյան